# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Վ.Վահիյանի 1 հասցեում է գտնվում h. 155 մանկապարտեզը, որի տանիքը պետք է վերանորոգվի:

Շենքի տանիքի ուսումնասիրելուց հետո որոշվեց ամբողջովին փոխել ծածկի թիթեղը: Նոր ծածկը իրականացնել ցինկապատ պրոֆիլավորված / КП-25-0,55 / և հարթ d=0.55 մմ թիթեղներով: Փոխվում են նաև ջրհոսները, ջրհորդանները, ջրհավաքները, ձագարները, ջրահեռացման խողովակները և ծածկի պատուհանների թիթեղները: Գոյություն ունեցող տանիքի ցանկապատը և արտաքին հակահրդեհային աստիճանները գտնվում են բարվոք վիճակում, անհրաժեշտ է այն ներկել համապատասխան մետաղի ներկով /2 անգամ/: Տանիքի փայտամածը՝ ծպեղները, հենասյուները, ծպեղնառտքերը, կավարամածը, քիվվահանը, պիպավահանը, պատուհանները գտնվում են բարվոք վիճակում:

Թիթեղի քանդման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է նորոգել կամ փոխել վնասված փայտե էլեմենտները: Նախքան նոր թիթեղի իրականացման աշխատանքները բոլոր փայտային էլեմենտները պետք է պատել հականեխիչ և հակահրդեհային լուծույթով:

## Քանդման աշխատանքների ծավալաթերթ

| N | Կատարվող աշխատանքներ | Ընդամենը |
|---|---|---|
| 1 | Հարթ թիթեղի քանդում տանիքի ծածկից | 480(մ²) |
| 2 | Հարթ թիթեղի քանդում պատուհաններից /слуховое окно/ | 9.0 ք.մ |
| 3 | Ջրհավաքների քանդում | 12 հատ |
| 4 | Ձագարների քանդում | 12 հատ |
| 5 | Ջրահեռացման խողովակների քանդում | 70.0 գծ.մ |

## Իրականացվող աշխատանքների ծավալաթերթ

| N | Կատարվող աշխատանքներ | Ընդամենը |
|---|---|---|
| 1 | Տանիքի ծածկի իրականացում պրոֆիլավորված ցինկապատ թիթեղիով / КП - 25 - 0,55 / | 480.0 (մ²) |
| 2 | Ծածկի պատուհանների իրականացում /слуховое окно/ հարթ ցինկապատ թիթեղով d=0.55 մմ | 9.0 ք.մ |
| 4 | Ջրհավաքների իրականաց. հարթ ցինկապատ թիթեղով d=0.55 մմ | 12 հատ |
| 5 | Ձագարների իրականացում հարթ ցինկապատ թիթեղով d=0.55 մմ | 12 հատ |
| 6 | Գագաթային էլեմենտ հարթ ցինկապատ թիթեղից d=0.55մմ | 21.0/ք.մ |
| 7 | Ջրահեռացման խողովակ. իրականաց. հարթ ցինկ. թիթեղ D=140մմ | 70.0 գծ.մ |
| 8 | Տանիքի մետաղական ցանկապատը և հակահրդեհային աստիճանի ներկում յուղաներկով /2 անգամ/ | 20.0 ք.մ |
| 9 | Տանիքի մետաղական ցանկապատի իրականացում /h=600/; | 68.0 գծ.մ |
| 10 | Տանիքի փայտե էլեմենտների լրացում (փայտանյութ) | 2.3 մ³ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Երևան քաղաքի Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանի Վահիյան h. 155 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգում | | | | ՊԱՏՎԵՐ № «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/65-1» |
| | | Ճարտարապետաշինարարական | | Փուլ / Թերթ / Թերթեր |
| ՏՆՕՐԵՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | [signature] | Բացատրագիր Ծավալաթերթ | ԱՆ / ՃՇ-2 / 10 |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Դ. ՀԱԿՈԲՅԱՆ | [signature] | | «Թ.Ա.Հ.Գ.Գրիգ» ՍՊԸ |